FUNDED BY THE EUROPEAN UNION
EU REGIONAL TRUST FUND 'MADAD'
الصندوق الاستئماني الأوروبي 'مدد'

WITH FUNDING FROM
AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

AUSTRIAN RED CROSS

Սիրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ

Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում

List of Organisations and Services provided to Syrian Armenians

Increased Resilience of Syrian Armenians and Host Population (IRIS)

ԵՐԵՎԱՆ 2019

9-րդ հրատարակություն, վերանայվել է՝ 19.09.19

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

This publication has been produced within the “Increased Resilience of Syrian Armenians and Host Population” (IRIS) programme. The objective of IRIS is to contribute to the National Integration Policy that intends to guarantee a dignified life for Syrian Armenians in Armenia through full protection and integration, with the specific objective to improve social and economic resilience of Syrian Armenians and host population and to strengthen institutional capacities for economic growth in Armenia.

Implementation period is July 2018 – June 2021

Implementing consortium:
Austrian Red Cross (Lead Partner)
Armenian Red Cross Society
Armenian Caritas Benevolent NGO
Centre for Coordination of Syrian Armenians’ Issues NGO
SME Cooperation Association

Funding
EU Regional Trust Fund in Response to the Syran Crisis, the ‘Madad’ Fund, Austrian Development Cooperation, Austrian Red Cross

©“Increased Resilience of Syrian Armenians and Host Population” (IRIS) programme and Centre for Coordination of Syrian Armenians’ Issues, 2019

“This publication has been produced with the financial assistance of the EU Regional Trust Fund‘in Response to the Syran Crisis, the ‘Madad’ Fund. The contents of this publication are the sole responsibility of and Centre for Coordination of Syrian Armenians’ Issues and can under no circumstances be regarded as reflecting the position of the European Union.”
https://ec.europa.eu/trustfund-syria-region/content/home_en

Սույն հրատարակությունը տպագրվել է «Սիրիահայերի եվ տեղացիների դիմակայունության բարձրացում» (ԻՐԻՍ) ծրագրի շրջանակներում։ Իրիս ծրագրի նպատակն է ունենալ ներդրում Ինտեգրացիայի ազգային քաղաքականության մեջ, որն ուղղված է Հայաստանում սիրիահայերի արժանապատիվ կյանքի ապահովմանը՝ ամբողջական պաշտպանության և ինտեգրման միջոցով՝ ունենալով հատուկ նպատակ բարելավել սիրիահայերի և տեղաբնակների սոցիալական և տնտեսական դիմակայունությունը, ինչպես նաև հզորացնել Հայաստանի տնտեսական աճի ինստիտուցիոնալ կարողությունները։

Ծրագրի տևողությունը՝ 2018թ-ի հուլիսից 2021թ-ը հունիսը

Իրականացնող կոնսորցիում
«Ավստրիական կարմիր խաչ» (ղեկավար գործընկեր)
«Հայկական Կարմիր խաչի ընկերություն»
«Հայկական Կարիտաս» Բարեգործական ՀԿ
«Սիրիհայերի հմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ
«ՓՄՁ համագործակցության» ասոցիացիա

Ֆինանսավորող
Սիրիկան ճգնաժամին ի պատասխան ստեղծված ԵՄ տարածաշրջանային Թրասթ Ֆոնդ՝ «Մադադ» ֆոնդ, Ավստրիական զարգացման համագործակցություն, Ավսրիական Կարմիր խաչ

© «Սիրիահայերի եվ տեղացիների դիմակայունության բարձրացում» և «Սիրիհայերի հմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ, 2019

«Սույն հրատարակությունը տպագրվել է սիրիական ճգնաժամին ի պատասխան ստեղծված ԵՄ տարածաշրջանային Թրասթ Ֆոնդի՝ «Մադադ» ֆոնդի ֆինանսական աջակցությամբ։ Այս հրատարակության բովանդակության համար պատասխանատու է «Սիրիհայերի հմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետը»:
https://ec.europa.eu/trustfund-syria-region/content/home_en

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- **Աշխատանքի տեղավորման աջակցություն**
  Սիրիահայ երիտասարդները պրակտիկա են անցնում տարբեր ոլորտի կազմակերպություններում՝ 6 ամիս ժամկետով: Ծրագրի և պրակտիկայի հետ կապված բոլոր ծախսերը հոգում է ընկերակցությունը: Պրակտիկայի ավարտին մասնակից երեխաների 60-70%-ը հնարավորություն է ստանում աշխատելու իրենց կազմակերպություններում: Դիմումներ այլևս չեն ընդունվում:

- **Հումանիտար և այլ տեսակի օգնություն**
  Տրամադրվող օգնության տեսակներն են՝ բնակվարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում, առողջապահական խնդիրների ախտորոշման և բուժման ծախսերի փոխհատուցում, հումանիտար փաթեթների տրամադրում և այլն:

Հասցե՝ ք. Երևան, 18 Մարշալ Բաղրամյանի պողոտա

Էլ. փոստ.՝ amma.armenia@amma.am

Հեռ.՝ 010 543576

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆ
ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA, ARMENIA

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

- Սիրիահայերին ձեռնարկատիրության ոլորտում աջակցություն
  2016 թվականից մեկնարկած ծրագրով ընտրվել են 29 բիզնես գաղափար: Ծրագրի շրջանակներում մրցակցային հիմունքով ընտրված սկսնակ և գործող բիզնես ունեցող սիրիահայերը ստանում են նպատակային ֆինանսական աջակցություն համակցված դրամաշնորհի և փոխառության տեսքով՝ հիմնականում սարք, սարքավորումների ձեռք բերման համար: Շահառուների կողմից հետվճարված գումարների շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ընտրել նոր շահառուների:
- Աջակցություն կրթական ծրագրերին
  Կրթավճարներ են տրամադրվում ՀՀ բուհերում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում լավ առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ուսանողներին: Ուսումնական տարվա սկզբին տրվում է կրթավճար ծրագրի մասին հայտարարությունը, որի չափանիշներին համապատասխանող ուսանողները ներկայացնում են դիմումներ: Հայ օգնության ֆոնդի կրթական ծրագրերի հանձնաժողովը դիտարկում է դիմումներն ու ընտրում այդ ուսումնական տարվա շահառուներին:

Հասցե՝ ք. Երևան, Խորենացի 22

Էլ. փոստ՝ bagrat.sargsyan@far.am

Հեռ.՝ 060 526660

ԱՄՔՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԿ

- ԱՄՔՈՐ Հայաստան բարեգործական հիմնադրամը մեկնարկել է իր «Աջակցություն սիրիահայ փախստականներին» ծրագիրը, նպատակ ունանալով բարելավելու 750 սիրիահայ ընտանիքների կյանքի որակը հիգիենիկ փաթեթների բաշխմամբ և ևս 750 ընտանիքների սնունդը՝ պարենի բաշխմամբ:

Ծրագրի տևողությունը 6 ամիս է, որը կիրականացվի Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող Կենտրոն ՀԿ-ի և «Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ-ի հետ միասին:

Հասցեն՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու փող., տուն 14

Էլ փոստ՝ umcor@umcor.am

Հեռ.՝ 011-282977

«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲՀԿ

- **«Սոցիալական, բժշկական, իրավաբանական և կացարանային աջակցության տրամադրում Հայաստանում գտնվող փախստականներին և ապաստան հայցողներին»**
  Սոցիալական, բժշկական, իրավաբանական և կացարանային աջակցության տրամադրում պատերազմի պատճառով Սիրիայից Հայաստան տեղահանվածներին և փախստականի կարգավիճակում հայտված անձանց:

- **Սոցիալական ծառայություններ** (սիրիահայերի ինտեգրմանն ուղղված ծրագրեր, այդ թվում՝ աջակցություն փաստաթղթավորման, պետական սոցիալական ծառայություններից օգտվելու հարցում եւ այլն),
- **Խնամքի ծառայություններ** (անկողնային հիվանդ և/կամ սահմանափակ շարժունակ անձանց խնամք)
- **Առողջապահական ծառայություններ** (մասնավորապես, բժշկի խորհրդատվություն, դեղորայքի տրամադրում, անհրաժեշտության դեպքում բուժման և հետազոտության կազմակերպում)
- **Հումանիտար աջակցություն** (դրամական աջակցություն, փաթեթների տրամադրում, այդ թվում՝ հիգիենիկ, անկողնային պարագաներ, հագուստ, սննդ և այլն)
- **Կացարանային աջակցություն** (կացարանի, բնակվելու վայրի հետ կապված հարցերում աջակցություն, այդ թվում՝ բնակարանների վարձավճարի մասնակի փոխհատուցման և սոցիալական բնակեցման միջոցով)
- **Իրավաբանական աջակցություն/խորհրդատվություն**
- **Շահերի պաշտպանություն:**

Հասցեն՝ ք.Երևան, Գ.Նժդեհ 42

Էլ.փոստ.՝ org@ngo.mission.am

Հեռ.՝096 403545

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

«Գալուստ Կիւլպենկեան» Հիմնարկություն

- **Սիրիահայ երիտասարդների կրթության համաֆինանսավորում**
  ՀԲԸՄ-ի և ՀՀ կառավարության (ի մասնավորի՝ ՀՀ սփյուռքի նախարարության) կողմից իրականացվող ծրագիր՝ ուղղված սիրիահայ ուսանողների աջակցությանը: Տրամադրվում է սիրիահայ ուսանողների ուսման վճարի մասնակի ֆինանսավորում:
- **Կարճաժամկետ նախագծեր, որոնք հանդիսանում են անհատների և կազմակերպությունների գաղափարներ**
  Առանձին անհատների գաղափարների իրագործումը խթանելու և նոր մտահաղացումները կյանքի կոչելու նպատակով իրականացվող ծրագիր:
- **Արեւմտահայերէնի օժանդակող ծրագիրներ**
  Արեւմտահայէրենը խթանելու ու ծախկացնելու ծրագիրներ՝ հրատարակություններ, գիտաժողովներ, հետազօտական աշխատանքներ, էլեկտրոնային գործիքներ:

Հասցե՝ Պորտուգալիա, ք. Լիսաբոն, Բեռնա փողոց 45 ա

Էլ. Հասցե՝ gulbenkian.pt/armenian-communities/

Հեռ.՝ (+351) 21 782 3000

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (GIZ)

- **Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում**
  /հոկտեմբեր 2018 - հոկտեմբեր 2021/

  Նպատակ

  Բարելավել Սիրիայից տեղահանված անձանց և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական ու սոցիալական մասնակցությունը Հարավային Կովկասում՝ աշխատանքի տեղավորման համար անհրաժեշտ կարողությունների հզորացման և համայնքային զարգացման միջոցով:

  Ծրագրի ընթացիկ գործողություններ

- **«Հայաստանի մարզերում բնակվող սիրիահայերի և նրանց կարիքների քարտեզագրում»**

  Հետազոտությունը տրամադրում է համապարփակ տեղեկատվություն Երևանի հարակից քաղաքներում և Հայաստանի տարբեր շրջաններում սիրիահայերի բաշխվածության և նրանց կարիքների վերաբերյալ:

- **Ձեռնարկատիրության և զբաղվածության դպրոցներ**

  «Փնտրի՛ր գործ, ստեղծի՛ր գործ» ձեռնարկատիրության դպրոց

  Դասընթացի նպատակն է ծանոթացնել մասնակիցներին Հայաստանի ձեռնարկատիրական ոլորտի և դրան վերաբերող օրենսդրության առանձնահատկություններին՝ դրանով իսկ նպաստելով նրանց ձեռնարկատիրական ներուժի զարգացմանը, նրանց կողմից ձեռնարկությունների ստեղծմանն ու աճին:

  Ծրագրին լիարժեք մասնակցություն ցուցաբերած և լավագույն բիզնես գաղափարներ ներկայացրած մասնակիցները կստանան աջակցություն սեփական բիզնես գաղափարն իրականացնելու համար:

  «Փնտրի՛ր գործ, գտի՛ր գործ» զբաղվածության դպրոց

  Դասընթացի նպատակն է ծանոթացնել մասնակիցներին Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկություններին, գործատուների հիմնական պահանջներին՝ դրանով իսկ նպաստելով նրանց մրցունակության բարձրացմանն աշխատաշուկայում:

Ծրագրին լիարժեք մասնակցություն ցուցաբերած մասնակիցները կստանանան ավարտական վկայականներ, ինչպես նաև ուղղորդում հավանական գործատուների հետ կապ հաստատելու գործում:

Դպրոցներն իրականացվում են «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ -ի կողմից՝ «Action Against Hunger» միջազգային մարդասիրական կազմակերպության հետ համագործակցությամբ:

- **«ՎինՄասթեր» վերապատրաստման դասընթաց**

  Ծրագրի նպատակն է կարճաժամկետ դասընթացների միջոցովստեղծել զբաղվածության և ձեռներեցության հնարավորութոյններ գինու արտադրության և վաճառքի ոլորտում: Դասընթացների արդյունքում մասնակիցները կծանոթանան խաղողագործության, գինեգործության, գինու համտեսի, գինեգործական սարքավորումների, գինու բիզնեսի ու տուրիզմի առանձնահատկություններին: Լավագույն մասնակցություն ցուցաբերած մասնակիցներին կտրամադրվի աջակցություն գինու արտադրության ինկուբացիոն ծրագրի կազմակերպման և իրականացման համար:

- **Ինտեգրման ռազմավարություն**

  Ծրագիրը համագործակցում է Հայաստանի միգրացիոն ծառայության հետ՝ տրամադրելով փորձագիտական աջակցություն՝ մշակելու ինտեգրման համապարփակ ռազմավարություն փախստականների, կացարան փնտրողների, վերադարձած և տեղանաված անձանց ինտեգրման համար:

Հասցե՝ թ. Երևան, Հանրապետության 59

Էլ. Փոստ.՝ karine.simonyan@giz.de

Հեռ.՝ 010 589337

giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

«ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» (ՀԿՍ)

- **Հումանիտար օգնություն**
  - Աջակցություն սիրիահայերին Հայաստանում 2012-2013թթ.
  - Աջակցություն հակամարտությունից տուժած քեսաբահայ ընտանիքներին - 2014թ.
  - 2012-2013 թթ. – Հումանիտար օգնություն 6000 փախստականների համար Հայաստանում պլաստիկ քարտերի միջոցով, ինչպես նաև սննդամթերքով, ոչ պարենային ապրանքներով՝ գրենական պիտույքներ, հիգիենիկ պարագաներ,

մանկական հագուստ, վերմակներ և այլն.

- 2014 թ. - հումանիտար օգնություն Լաթաքիայում, Սիրիա՝ Քեսաբի 2500 տեղահանվածների համար, հանրային քննարկումների իրականացում

- **Սոցիալ-հոգեբանական աջակցություն (2015-2018 թթ.)**
  - Սոցիալ-հոգեբանական աշխատանք հոգեբանի (մասնավոր եւ խմբային) կողմից՝ավելի քան 700 սիրիահայերի համար
  - Տնային այցելություններ եւ կարիքների գնահատում
  - Բարոյահոգեբանական աջակցություն՝ մարդասիրական օգնություն, տարբեր միջոցառումներ, ուխտագնացություններ, խորհրդատվություն ավելի քան 2500 սիրիահայերի համար
  - Հանրային իրազեկման բարձրացում - ավելի քան 500 սիրիահայերի համար
  - Վավերագրական ֆիլմերի նկարահանում
  - Վերբատիմ թատրոն (փաստավավերագրական) - «Մանանա» (6 ներկայացում)

- **Տնտեսական հզորացում (2015-2017թթ.)**
  - Մասնագիտական վերապատրաստումներ՝ ավելի քան 150 սիրիահայերի համար
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ (վեբ և ընդհանուր ծրագրավորում)
  - Կիրառական արվեստներ, լեզուներ
  - Աշխատանքային սարքավորումների տրամադրում՝55 սիրիահայերի համար
  - Աշխատանք ընտանիքների հետ
  - Մարքետինգ, աշխատանքային օրենսդրության իրազեկեկում
  - Մասնակցություն փառատոնների, Սուրբ Ծննդյան շուկաների, ցուցահանդեսներին

- **Սիրիահայ երիտասարդների աջակցության ծրագիր**
  - Կարողությունների զարգացում

Դասընթացներ են կազմակերպվել ավելի քան 180 սիրիահայ երիտասարդների համար հետևյալ թեմաներով՝ անգլերեն, առաջին բուժօգնություն, հոգեբանություն և արդյունավետ հաղորդակցություն, համակարգչային հատուկ ծրագրերի ուսուցում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողների համար, ծրագրավորում, Microsoft Office, CV կազմելու դասընթաց:

  - Ֆինանսական աջակցություն

75 սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցում:

  - Հոգևոր և հոգեբանական աջակցություն

Ուխտագնացություններ են իրականացվել Տաթև և Նորավանք: 7-օրյա ճամբար Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի «Ծիծեռնակ» ճամբարում 2018 թ. շուրջ 40 շահառուների համար հայրենաճանաչողության, ազգային երգի և պարի, ասմունքի դասընթացների իրականացում: 2019 թ. Հայաստանի Աստվածաշնչային Ընկերության

հետ համատեղ իրականացվեց սիրիահայ երիտասարդների ինտեգրման ամառային ճամբար՝ 25 սիրիահայերի մասնակցությամբ:

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1101

Էլ. Փոստ.՝ info@roundtable-act.am

Հեռ.՝ 010 51 71 57, 010 51 72 16

«ԻԶՄԻՐԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

- **«Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագիր**
  Ծրագրի շրջանակներում խոցելիության համապատասխան մակարդակ ունեցող սիրիահայերը իրավունք են ստանում անվճար բուժօգնություն ստանալ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում:

  - ✓ Ծրագրի շրջանակներում շահառուն նախ պետք է լրացնի համապատասխան հարցաթերթիկը, որի հիման վրա կորոշվի նրա խոցելիության մակարդակը:
  - ✓ Հաջորդ քայլով շահառուն կուղղորդվի նախնական բժշկական խորհրդատվության ՀԲԸՄ-ի կողմից հիմնադրված և ՀԲԸՄ Վահե Կարապետյան կենտրոնի 2-րդ հարկում գործող «Քլոտիա Նազարեան» բժշկական սպասարկման կենտրոն (Հասցե՝ Զաքարյա Քանաքեռցու 1):

Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող., 2/1 շենք

Էլ. Փոստ՝ info@izmirlianfoundation.am

Հեռ.՝ 010 58 8897

«ԿԱԶԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- Սոցիալ-տնտեսական ներգրավմանն ուղղված դասընթացներ /ծրագրեր., համակարգչային դասընթացներ, ինքնազբաղվածության հմտություններ

- Երիտասարդության ներգրավման ծրագրեր եւ միջոցառումներ. «Բազմազանության Միասնություն» ծրագիր (երիտասարդական կոալիցիա):
- Սոցիալ-մշակութային ինտեգրման ծրագիր. «Միացեք համայնքին» ծրագիր (հայոց լեզվի դասընթացներ եւ մշակութային հանդիպումներ Հատուկ Կացարանում և ոչ միայն), ինչպես նաև աջակցություն Գորիս քաղաքում Համայնքային Տեխնոլոգիական կենտրոնի շահագործմանը:

Հասցե՝ ք. Հայաստան, ք. Երևան, Նալբանդյան 29

Էլ. փոստ՝ espaces@kasa.am kasaarm@kasa.am

Հեռ. 010 54 18 44, 077 54 18 44, 055 54 18 45 Աշխատանքային օրեր՝ երք -շաբաթ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԲԸՄ)

- **Հայաստանի բարձրագույն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցում**
  ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սիրիահայ ուսանողները կստնան տվյալ ուսումնական տարում ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում՝ ՀՀ կառավարության և «Գալուստ Կյուլխենկյան» հիմնարկության հետ իրականացվող համատեղ ծրագրի շրջանակներում:

- **Անվճար բժշկական օգնություն և սրտի վիրահատության ծախսերի մասնակի փոխհատուցում**
  ՀԲԸՄ աջակցությամբ հիմնադրվել և գործում է «Քլոտիա Նազարեան» բժշկական սպասարկման կենտրոնը՝ պոլիկլինիկան, որն անվճար բժշկական օգնություն է տրամադրում սիրիահայերին՝ գինեկոլոգիայի, ակնաբուժության, մանկաբուժության, սրտաբանության ոլորտներում:

- **Հումանիտար օգնություն**
  Ծրագրի շրջանակում տաք հագուստի փաթեթներ են տրամադրվում Սիրիահայ շահառուներին: Բաշխումը կատարվում է Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի միջոցով:

- **Գյուղատնտեսության զարգացում**
  Ծրագրի շրջանակներում սահմանամերձ գյուղերում ապրող Սիրիահայ ընտանիքները ստանում են աջակցություն՝ հողատարածք, հող մշակելու գործիքներ, սերմեր, տնկիների և այլ հողագործության հետ կապված պարագաներ:

Վիրահատության մասով ծախսերի մասնակի փոխհատուցում ստանալու համար սիրիահայերը կարող են դիմել «Սիիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին:

Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող., 2/2 շենք

Էլ.Փոստ՝ agbuarm@agbu.am

Հեռ.՝ 060 72 22 22

«ՀՕՄ Արվեստ» սոցիալական ձեռնարկություն

«ՀՕՄ Արվեստ» սոցիալական ձեռնարկությունը ստեղծվել է «Հայ Օգնության Միություն» բարեգործական և հասարակական կազմակերպության կողմից 2017 թվականին, որի նպատակն է աջակցել սիրիահայ և տեղացի կանանց տնտեսական ինտեգրմանն ու զարգացմանը: Ձեռնարկությունը իր գործունեությունից ստացած ամբողջ շահույթը ուղղում է բարեգործական ծրագրերի: «ՀՕՄ Արվեստ» սոցիալական ձեռնարկությունը ունի ցուցասրահ-վաճառասրահ Չարենցի 20 հասցեում, որտեղ վաճառվում են սիրիահայ և տեղացի կանանց կողմից ստեղծված ձեռագործ աշխատանքներ /սփռոց, սկուտեղ, անձեռոցիկի տուփ, զարդեր, հուշանվերներ/: Սոցիալական ձեռնարկությունը կազմակերպում է ձեռագործ աշխատանքների եռամսյա և միօրյա դասընթացներ՝

- Վանի ձեռագործություն
- Սվազի ձեռագործություն
- Մարաշի ձեռագործություն
- Այնթապի ձեռագործություն
- Ասեղնագործություն
- Մաքոքագործություն
- Կարպետագործություն
- Կպչարվեստ
- Թղթարվեստ
- Ժապավենագործություն:

- **Նյութական աջակցություն**
  - Հագուստի և կոշիկների տրամադրում սիրիահայ ընտանիքներին
  - Ձմեռային ծածկոցների և վերմակների տրամադրում սիրիահայ ընտանիքներին

- **Ֆինանսական աջակցություն**
  - Ֆինանսական աջակցություն սիրիահայ սոցիալապես անապահով ընտանիքներին

- Ֆինանսական աջակցություն սիրիահայ ուսանողներին

- **Սիրիաահայերի ուղղորդում**
  Որևէ խնդրով կազմակերպություն դիմած սիրիահայերին ուղղորդում տվյալ տեսակի խնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր իրականացնող հաստատություններ:

Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փող., 116 շենք, բն.24

Էլ.փոստ՝ ars@arsarmenia.org

Հեռ.՝ 010-567513

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ ՓԳՀ կողմից ֆինանսավորվող ծրագիր

«Փախստականների պաշտպանություն և տնտեսական ինտեգրում» ծրագիրը միտված է բարելավիելու Հայաստանում փախստականների, ապաստան հայցողների և այլ տեղահանված անձանց ապահով միջավայրը և հեշտացնելու մուտքը դեպի տնտեսական ինտեգրում:

Ծրագրի նպատակն է՝

- վերադարձելիության կանխարգելում և ՀՀ տարածք մուտքի և ապաստանի գործընթացի բարելավում՝ մուտքի պաշտոնյաների կարողությունների զարգացման և Հայաստանում սահմանային անցակետերի մոնիթորինգի միջոցով;
- փախստականների, փասխտականի նման կարգավիճակ ունեցողների և ապաստան հայցողների տնտեսական ինտեգրում
- Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների շրջանում սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների (ՍԳՊԲ) կանխարգելում և արձագանք:

- **Գործունեությունը**

Վերադարձելիության կանխարգելման և ՀՀ տարածք մուտքի և ապաստանի գործընթացի բարելավման շրջանակներում՝

- դասընթացներ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար
- դասընթացներ լրատվամիջոցների ներկայացուցիչների համար
- տեղեկատվական հանդիպումներ տարբեր համայնքների և բնակավայրերի ապաստան հայցողների և փախստականների համար
- համակարգող հանդիպումներ մարզերում մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի աշխատանքային խմբերի համար

- արտակարգ իրավիճակներին նախապատրաստման, անվտանգության և առաջին օգնության դասընթացներ հատուկ կացարանի, հանրակացարանների, միգրացիոն ծառայության, փախստականների ոլորտում առաջատար կազմակերպությունների և այլ ադմինիստրատիվ աշխատակազմի համար
- արտակարգ իրավիճակներին նախապատրաստման, անվտանգության և առաջին օգնության դասընթացներ փախստականների և ապաստան հայցողների համար
- ՍԳՊԲ կանխարգելման դասընթացներ մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար
- ՍԳՊԲ վերաբերյալ դասընթացներ գործընկեր կազմակերությունների անձնակազմերի համար
- «Ձմեռային/Ամառային դպրոց»-ների կազմակերպում երիտասարդների համար մարդու իրավունքների, գենդերային հավասարության, ՍԳՊԲ վերաբերյալ
- ՍԳՊԲ դասընթաց թարգմանիչների համար
- ՍԳՊԲ վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործունեության իրականացում համայնքներում՝ համայնքային աշխատանքային խմբերի կողմից իրականացվող նախաձեռնությունների միջոցով
- Կանանց փոխաջակցման խմբի հանդիպումներ
- Ոչ ֆորմալ զրույցներ գենդերային հավասարության վերաբերյալ
- Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյակի շրջանակներում միջոցառումների կազմակերպում
- դասընթաց սահմանային անցակետերի և անձնագրերի և վիզայի վարչության պաշտոնյաների համար (Զվարթնոց, Գյումրի-Բավրա, Բագրատաշեն, Գոգավան, Մեղրի)
- Սահմանային անցակետերի մոնիթորինգ Զվարթնոց, Բագրատաշեն, Գյումրի, Բավրա, Այրում, Գոգավան, Մեղրի սահմանային անցակետերում

- **Մտահոգության առարկա հանդիսացող անձանց տնտեսական ինտեգրման շրջանակներում՝**
  - աշխատանքային գործիքների (որպես սուբսիդավորված եկամտային աջակցություն) տրամադրում մտահոգության առարկա հանդիսացող անձանց սկսնակ և գործող բիզնեսներին, նրանց ինքնաբավությանը նպաստելու և նրանց եկամտի աղբյուրները բարձրացնելու կամ բազմազան դարձնելու միջոցով,
  - փախստականների ուղղորդումներ բիզնեսի աջակցման այլ ծրագրերի և բիզնես դասընթացների
  - ցուցահանդես-վաճառքների կազմակերպում
  - ֆինանսական գրագիտության դասընթացի և խնայողությունների խաղի կազմակերպում

- **ՍԳՊԲ կանխարգելման և արձագանքման շրջանակներում՝**
  - ՍԳՊԲ դեպքերի ճշգրիտ և ժամանակին բացահայտում
  - ՍԳՊԲ դեպքի վարում և հոգեբանական աջակցություն, անհապաղ (24 և 48 ժամ) և հետագա ուղղորդումներ այլ կազմակերպություններին՝ անհրաժեշտության դեպքում նյութական և ապաստանի աջակցության նպատակով,
  - ՍԳՊԲ վերապրածների շրջանում ինքնաբավության խթանում համաձայն ՄԱԿ ՓԳՀ և ՀԿԽԸ միջև ընդունված և ստորագրված ՍԳՊԲ Ստանդարտ գործառնական ընթացակարգի,

- Իրազեկության բարձրացման և կարողության զարգացման համապարփակ գործունեություն:

- **Սիրիկան ճգնաժամին ի պատասխան ստեղծված տարածաշջանային Թրասթ ֆոնդի՝ ՄԱԴԱԴ ֆոնդի, Ավստրիական զարգացման համագործակցության և Ավստրիական Կարմիր խաչի կողմից ֆինասավորվող «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» (ԻՐԻՍ) ծրագիր**

2018թ. հուլիսից իրականացվում է «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» (ԻՐԻՍ) ծրագիրը, որի հիմնական նպատակն է բարելավել սիրիահայերի և տեղացիների սոցիալ-տնտեսական դիմակայունությունը և հզորացնել Հայաստանում տնտեսական աճի ինստիտուցիոնալ կարողությունները:

- **Բնակարային խնդրի լուծման և ինքնաբավության ապահովման բաղադրիչ.**
  - առավել խոցելի սիրիահայերի բնակարանային վարձերի մասնակի փոխհատուցում
  - բնակարանային խնդրի լուծման նպատակով նոր հայեցակարգային մոդելների մշակում
  - անհատական դեպքերի վարում
  - աջակցության տրամադրում զբաղվածության ապահովման հարցում՝ սիրիահայերի և առավել խոցելի տեղացիների համար
  - սիրիացի աշխատանք փնտրողների կայքի վերագործարկում
- **Ուսումնական բաղադրիչ.**
  - **Հանդուրժողականության ուսուցում**. Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ-ն հանդուրժողականության դասընթացներ է անցկացնում դպրոցների տարրական դասարանների ուսուցիչների համար, որոնք էլ իրենց հերթին կիրականացնեն «Հանդուրժողականություն» թեմայով դասընթացներ առաջինից չորրորդ դասարանների աշակերտների համար:
  - **Հոգեբանական Առաջին օգնություն**. Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ-ն իրականացնում է երկօրյա հոգեբանական առաջին օգնության մասին դասընթաց դպրոցների ուսուցիչների և ղեկավարող անձնակազմի համար: Դասընթացներ են կազմակերպվում նաև այլ շահագրգիռ կողմերի՝ հասարակական կազմակերպությունների, կամավորների և պետական կառույցների համար:
  - **Երեխաների կայուն զարգացում**. Նախապես կրթած կամավորների խմբի ներգրավվում դպրոցներում ոչ ֆորմալ կրթության տարածման հարցում: Սիրիահայ և տեղացի միջին դասարանի երեխաներից ձևավորված խմբերի հետ հատուկ մշակված մեթոդոլոգիայով դասընթացների իրականացում և համայնքային միջոցառումների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ-ն իրականացնում է երիտասարդական նորարարական ճամբարներ, սիրիահայ և տեղացի երիտասարդների կարողությունների և առաջնորդության հմտությունների ձևավորման և բարձրացման նպատակով: ՀԿԽԸ-ն երիտասարդ առաջնորդների համար փոքրիկ դրամաշնորհներ է տրամադրում: Դրամաշնորհները հնարավորություն կընձեռեն երիտասարդներին իրականացնել համայնքային միջոցառումներ, ինչպես նաև կյանքի կոչել երիտասարդների սեփական, արդի ու նորարարական գաղափարները:
- **Սոցիալ-հոգեբանական բաղադրիչ.**

- Սոցիալ-հոգեբանական կենտրոնի միջոցով հոգեբանական ծառայությունների մատուցում.

1. Անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվություն
2. Սոցիալական և մշակութային միջոցառումների կազմակերպում
3.Սիրիահայ մեծահասակների համար սոցիալական ինտեգրման վերաբերյալ գործունեության կազմակերպում

- **«Այցելու» սոցիալ - հոգեբանական ծառայություն**

Հատուկ պատրաստված երիտասարդ կամավորների միջոցով այցելությունների կազմակերպում թվով 200 հանրակացարանաբնակ, տեղացի և սիրիահայ կարիքավոր տարեցներին՝ կենցաղային աշխատանքներում աջակցություն, տեղեկատվության տրամադրում, եռամսյակը մեկ հիգիենիկ ու սննդի փաթեթների տրամադրում, ընդգրկում մշակութային միջոցառումներին:

Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 21/1

Էլ. Փոստ՝ redcross@redcross.am

Հեռ.՝ 060 62 50 50

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՄԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

- **«Գթության խոհանոց» ծրագիր**

Ծրագրի շահառուներն են միայնակ թոշակառուները, հաշմանդամները, ծնողազուրկ երեխաները և սոցիալապես անապահով անձինք, այդ թվում նաև 24 սիրիահայ ընտանիքների 90 անդամներ : Ծրագրի շրջանակներում շահառուները օրական մեկ անգամ ստանում են կալորիապես հարուստ տաք ճաշ:

Ծրագրից օգտվել ցանկացողները կարող են դիմում ներկայացնել կամ Երևանի քաղաքապետարան կամ իրենց բնակության վայրի վարչական շրջան:

Քաղաքապետարանից կամ վարչական շրջանից միջնորդագիր ստանալուն պես՝ ԳԿԽ մասնաճյուղի կողմից իրականացվում է վերահսկողական այց: Եթե դիմող անձը համապատասխանում է ծրագրի պահանջներին, ապա ընդգրկվում է ծրագրում որպես շահառու:

Հասցե՝ Դրոյի փող, 22/5 շենք, 0069 ք. Երևան

Էլ.փոստ՝ info@hoh.am

Հեռ.՝ 010-242968

Deutsches Rotes Kreuz
Landesverband Baden-Württemberg e.V. Zweigstelle in Armenien
Գերմանական Կարմիր Խաչ

«ՀՈՒՍՈ ՏՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- **«Տեղահանված և սոցիալապես խոցելի խմբերի ինտեգրումը հայաստանյան աշխատանքային շուկայում մասնագիտական կրթության և աջակցության միջոցով»**

Ծրագրի նպատակն է տեղահանված և սոցիալապես խոցելի խմբերի ներգրավումը հայաստանյան միջավայրում՝ աշխատաշուկայում և հասարակությունում, ինչպես նաև նրանց սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակի բարելավումը: Ծրագիրը հնարավորություն է տալիս թիրախային խմբին մասնակցելու կարիերայի պլանավորման և զարգացման դասընթացին, որից հետո լավագույն արդյունք ցուցաբերած շահառուներին հնարավորություն է տրվում անցնել աշխատանքային պրակտիկա կամ մասնակցություն ունենալ վերապատրաստման դասընթացների:
Ծրագրի շահառուներն են՝ տեղահանված և սոցիալապես խոցելի խմբեր:
Ծրագրին մասնակցելու համար, անհրաժեշտ է լրացնել դիմում-հարցաթերթիկ և անցնել հարցազրույց ծրագիրն իրականացնող գործընկեր կառույցների կողմից:
Իրականացնող կազմակերպություններ: Ծրագիրն իրականացնում է «Սյունիք-Զարգացում» ՀԿ-ն, «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Հասցե՝ Դրոյի 22/5, 0069 ք. Երևան
Էլ. փոստ՝ foundation@hoh.am

Հեռ.՝ + 374 11 24 12 31, + 374 93 51 63 52

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԿ

- **«Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում»**
  Ծրագիրը ֆինանսավորմում է Եվրոպական միության Սիրիայի տարածաշրջանային ֆոնդի (ՄԱԴԱԴ) կողմից, համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից:
  Ծրագիրն իրականացվում է Ավստրիական Կարմիր խաչից, Հայկական Կարմիր խաչի ընկերությունից, Հայկական Կարիտասից, ՓՄՁ Համագործակցություն ասոցիացիա ՀԿ-ից և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ից կազմված կոնսորցիումի կողմից:

  Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ նպաստել ինտեգրման ազգային քաղաքականության բարելավմանը, որը ուղղված է Հայաստանում սիրիահայերի արժանապատիվ կյանքի ապահովմանը՝ լիարժեք պաշտպանության և ինտեգրման միջոցով:

  Ծրագրի խնդիրն է՝ բարելավել սիրիահայերի և տեղացիների սոցիալ-տնտեսական կայունությունն ու ամրապնդել Հայաստանում տնտեսական աճի ինստիտուցիոնալ կարողությունները:

  Ծրագրի տնտեսական ինտեգրման բաղադրիչի շրջանակում Հայկական Կարիտասը՝ ՓՄՁ համագործակցություն ասոցիացիա ՀԿ-ի հետ համագործակցությամբ, Երևանում հիմնելու են ՓՄՁ բիզնես ինկուբատոր: Նպատակն է՝ մի կողմից նպաստել Հայաստանում բիզնես միջավայրի, բիզնես մշակույթի բարելավմանը, մյուս կողմից՝ դասընթացների, ուղղորդման, ֆինանսավորման և ինկուբացիայի միջոցով նպաստել սիրահայերի և տեղացիների գործարար գաղափարների իրականացմանը, ձեռնարկությունների զարգացմանը:

  Հայկական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ իրականացվում է խոցելի ընտանիքների (100 ընտանիքի) բնակարանի վարձավճարների փոխհատուցում և դեպքի վարում:

  Ծրագրի տնտեսական բաղադրիչին կարող են դիմել սիրիահայ և տեղացի սկսնակ գործարարներ, ինքնազբաղված անձինք և ՓՄՁ-ներ:

  Ծրագրի սոցիալական բաղադրիչին կարող են դիմել սիրիահայ խոցելի ընտանիքներ, որտեղ կան միայնակ ծնող, ռիսկի մեջ գտնվող տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձինք, առանձնահատուկ իրավական և ֆիզիկական պաշտպանության կարիք ունեցող անհատներ, սեռով և գենդեռով պայմանավորված կամ ցանկացած այլ տեսակի բռնության ենթարկված անդամ, զոհ, ռիսկի մեջ գտնվող երեխա, ռիսկի մեջ գտնվող կին, ովքեր ի վիճակի չեն վճարել իրենց բնակարանի վարձը և համապատասխանում են ծրագրի պահանջներին:

- **«Ճանաչել: Պաշտպանել: Իրագործել»**
  Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Կարիտաս Ավստրիայի և Կարիտաս Լիբանանի հետ համագործակցությամբ: Ծրագրի ընդհանուր

նպատակն է՝ նպաստել ապաստան հայցողների, փախստականների և միգրանտների՝ մարդու իրավունքների պաշտպանությանը Լիբանանում և Հայաստանում:

Ծրագրի շրջանակներում Հայաստանում տրամադրվում է՝

- իրավաբանական խորհրդատվություն,
- քարոզչական, տեղեկատվական նյութերի (փախստականներին աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների, փախստականների կարգավիճակի և իրավունքների մասին գրքույկի, բուկլետի) մշակում,
- հիմնական շահագրգիռ կողմերի հետ համատեղ Հայաստանում փախստական ընտանիքների համար իրազեկման հանդիպումների իրականացում,
- «թեժ գիծ» տեղեկատվական ծառայություն սիրիահայերի համար,
- լեզվի դասընթացներ (արևելահայերեն, ռուսերեն, անգլերեն) սիրիահայերի, սիրիացիների և տեղահանված այլ անձանց համար,
- մասնագիտական վերապատրաստման դասընթացներ,
- աջակցություն զբաղվածության ապահովմանը՝ գործիքների տրամադրման միջոցով,
- բիզնես աջակցություն՝ դասընթացների միջոցով,
- դասընթացներ սիրիահայ երիտասարդության համար՝ ուղղված մարդու իրավունքների հարցերի շուրջ իրազեկվացության բարձրացմանը (Ճամբարի միջոցով)

  Ծրագրի բաղադրիչներին կարող են դիմել՝
  - խոցելի փախստական ընտանիքներ,
  - ապաստան հայցողներ,
  - միգրանտներ,
  - սիրիահայեր և տեղահանված այլ անձինք,
  - տեղացիներ:

- **Միգրացիա և զարգացում III**

  Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ նպաստել միգրացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային քաղաքականության բարելավմանը՝ ԵՄ երկրներից վերադարձող ՀՀ քաղաքացիների կայուն վերաինտեգրման և անօրինական միգրացիայի նվազեցման միջոցով:
  Ծրագրի շրջանակներում վերաինտեգրման աջակցությունից կարող են օգտվել Եվրոպական միության երկրներից վերադարձող սիրիահայ միգրանտները:
  Սիրիահայերը կարող են դիմել բիզնես աջակցության (անտոկոս փոխառության) համար:

  Ծրագրի տնտեսական բաղադրիչին կարող են դիմել սիրիահայեր, պոտենցիալ միգրանտներ, ԵՄ երկրներից վերադարձող ՀՀ քաղաքացիներ :

  Ծրագիրը ֆինանսավորվում է Կարիտաս Ավստրիայի, Լիխտենշտեյնի կառավարության կողմից:

Հասցե՝ Երևան, Չայկովսկու փ., 34, բն. 23
Էլ.փոստ՝ l.stepanyan@caritas.am
Հեռ.՝ 010 56 57 66

«ՀԱԼԵՊ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԿ

- **Տաքուկ Ձմեռ» ծրագիր**
  Ծրագրի շրջանակում տարատեսակ մարդասիրական օգնության (հագուստ, կոշիկ, պարեն, հիգիենիկ պարագաներ, դրամային օգնություն) փաթեթներ են տրամադրվում կազմակերպության շահառուներին: Մարդասիրական օգնությունը տրամադրվում է ամբողջ տարվա ընթացքում:

- **«Հիւրընկալէ ընտանիք մը» ծրագիր**
  Բնակարանով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելուն ուղղված ծրագիր: Բարերարների կողմից ձեռք են բերվում բնակարաններ, որոնք պայմանագրային հիմունքներով ժամանակավոր անհատույց օգտագործման նպատակով տրամադրվում են Հայաստանում ապաստանած սիրիահայ առավել խոցելի ընտանիքներին: Ծրագրի շրջանակում նաև ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսական աջակցությամբ ձեռք են բերվում բնակարանով ապահովված ընտանիքների համար կահույք և առաջնային օգտագործման կենցաղային պարագաներ:

- **«Ալեպպո Քուիզին» կենտրոն**
  «Ալեպպո Քուիզին» սոցիալական կենտրոնը գործում է որպես արտադրամաս և սննդի կետ ու մատուցում ծառայություններ սննդի արտագնա սպասարկման ոլորտում:
  Կենտրոնն աշխատատեղեր է ստեղծում սիրիահայ կանանց համար և նպաստում Հայաստանում նրանց տնտեսական ու սոցիալական զարգացմանը: Կենտրոնի գործունեությունից գոյացած շահույթը ծառայում է կենտրոնում աշխատող սիրիահայ կանանց կայուն եկամուտ ապահովելուն և խոցելի կարգավիճակում գտնվող սիրիահայ ընտանիքներին մարդասիրական օգնություն տրամադրելուն:

- **«Որդեգրէ ընտանիք մը» ծրագիր**
  Ծրագիրը ծառայում է հարթակ անհատ բարերարների համար, ովքեր «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի միջոցով կապ են հաստատում կարիքավոր սիրիահայ ընտանիքների հետ, նրանց «որդեգրում» և ամսական 100-ից 200 ԱՄՆ դոլար ֆինանսական օգնություն են ցուցաբերում ընտանիքներին: Ֆինանսական օգնությունը նախատեսված է կենցաղային ծախսերը (վարձավճար, կոմունալ, սնունդ և այլն) հոգալու համար:

- **«Սիրիահայ երիտասարդների պայծառ ապագա» ծրագիր**

«Սիրիահայ երիտասարդների պայծառ ապագա» ծրագրի նպատակն է համախմբել սիրիական հակամարտության հետևանքով Հայաստանում ապաստանած երիտասարդներին, նոր գիտելիքներ ու հմտություններ տալ նրանց՝ նպաստելով վերջիններիս զարգացմանը և հայաստանյան քաղաքացիական կյանքում ակտիվ ներգրավմանը: Ծրագրի նպատակներից է նաև համատեղ միջոցառումների միջոցով ամրապնդել սիրիահայ և տեղաբնակ երիտասարդների միջև կապը: Այս ծրագրի մասնակիցները մասնակցում են տարատեսակ դասընթացների, միջոցառումների, սեմինարների, կոնֆերանսների, ուխտագնացությունների և արշավների:

- **Սոցիալ-հոգեբանական աջակցություն սիրիահայերին**
  Սոցիալ-հոգեբանական աջակցությունը ցուցաբերվում է յուրաքանչյուր ուրբաթ օր «ՀԱԼԵՊ» ՀԿ-ի կենտրոնում: Հավաքներին իրենց մասնակցությունն են բերում ԱՀԹ քահանան և տարբեր խոսնակներ, ովքեր ոչ միայն տրամադրում են հավաքի մասնակիցներին սոցիալ-հոգեբանական աջակցություն, այլև նպաստում են նրանց կրթական, գիտական զարգացմանը ու աջակցում ծրագրի մասնակիցների ինքնաիրացմանը հայաստանյան քաղաքացիական կյանքում:

- **«Աշխատանքային իրավունքներն մարդու իրավունքներ են»:**

  Հետազոտական և հասարակական պաշտպանության այս ծրագրի նպատակն է փաստագրել Հայաստանում սիրիացիների աշխատանքային իրավունքների խախտումները, շահերի պաշտպանության և կրթական քարոզարշավների միջոցով խթանել նրանց աշխատանքային իրավունքների պաշտպանությանը ողջ երկրում: Ծրագիրը նպատակ ունի նաև կրթական միջոցառումների միջոցով բարձրացնել սիրիացի տեղահանված անձանց «աշխատանքային իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածությունը, որը վերաբերում է հավասար վարձատրությանը, արդար աշխատանքի պայմաններին, սոցիալական ապահովությանը, առողջապահության և բարեկեցության ապահովմանը:

  Ծրագիրը նպատակ ունի նաև կազմակերպել շահերի պաշտպանության քարոզարշավներ՝ հասցեագրված կառավարությանը և բիզնեսներին՝ անհրաժեշտության դեպքում նպաստելու համար աշխատանքային իրավունքի բարեփոխումներին:

- **Կանանց ձեռներեցությանը նպաստող դասընթացներ**
  Իրականացվում են ձեռարվեստի, թաղիքագործության, ասեղնագործության և դիզայնի դասընթացներ, որոնց նպատակն է խթանել սիրիահայ կանանց ձեռներեցության հմտությունների զարգացումը, նրանց տնտեսական մասնակցությունը և սոցիալական պայմանների բարելավումը Հայաստանում

Հասցե՝ ք. Երևան, Հյուսիսային պող., 11 շենք, -1 հարկ

Էլ. Փոստ՝ info@aleppo-ngo.org

Հեռ. 010 545369 , 098 545361,

«ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

- Սիրիահայերի միությունը մատուցում է ծառայություններ իր անդամներին անդամակցության հետևյալ փաթեթների շրջանակներում՝

  - բազիսային անդամակցություն (0 ՀՀ դրամ/ տարի)
  - ստանդարտ անդամակցություն (50 000 ՀՀ դրամ / տարի)
  - VIP անդամակցություն (150 000 ՀՀ դրամ / տարի)
- Սիրիահայ ձեռներեցների, այդ թվում՝ կին ձեռներեցների աշխատանքների ցուցահանդես վաճառքների կազմակերպում և միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում։

- Ինֆո հաբ, որը իրականացնում է տեղեկատվության տրամադրում սիրիահայ ձեռներեցներին մեկ պատուհանի սկզբունքով և հետևյալ ուղղություններով՝
  - բիզնեսի գրանցման համար անհրաժեշտ գործողությունների և փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվություն
  - հարկային և մաքսային քաղաքականության մասին տեղեկատվության տրամադրում
  - բիզնես պլանի կազմում և դրանց կազմման աջակցություն
  - սիրիահայ բիզնեսների համար ներդրումների ներգրավում
  - մարքեթինգային խորհրդատվություն
  - բրենդինգ
  - իրավաբանական խորհրդատվություն
  - հաշվապահական խորհրդատվություն

- Սիրիահայերի արդյունաբերական գոտին (ՍԱԳ) արդեն բացվել է և գործում է։ Սիրիահայերի միության անձնակազմը նույնպես տեղակայված է ՍԱԳ-ում՝ Կոմիտասի 49/3 հասցեում:

  Արդյունաբերական գոտում գործում է համակարգչային կենտրոն, որտեղ անցկացվում են 3DsMax, Adobe Photoshop, Adobe Illustrator, Coral Draw և այլ դասընթացներ։ Բացի այդ համակարգչային կենտրոնից օգտվում են ՍՀՄ շահառուները:
  Արդյունաբերական գոտում առկա է կոնֆերանս դահլիճ՝ համապատասխան կահավորմամբ:

  Արդյունաբերական գոտում առկա է կոնֆերանս դահլիճ՝ համապատասխան կահավորմամբ։

  Արդյունաբերական գոտում գործում են ավելի քան 10 ձեռներեց:

- Եվրոպական միության ֆինանսավորմամբ Հայկական Կարիտասի "Ճանաչել։Պաշտպան ել։Իրագործել։" ծրագրով Սիրիահայերի միությանը տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակում իրականացվող

"Սիրիահայերի ինտեգրումը որպես իրավունքների պաշտպանության բանալի" ծրագրի շրջանակում ՍՀՄ անձնակազմը կազմակերպում է դասընթացներ հետևյալ թեմաներով՝

- Հարկային և մաքսային քաղաքականություն, բիզնես միջավայր
- Մարքեթինգ և բրենդինգ
- Վաճառք
- Բիզնես-պլանի կազմում
- Բիզնես գաղափարի ստեղծում և ներկայացում ներդրողին:

Այս ծրագրի շրջանակներում իրականացվում են նաև ուղղորդման հանդիպումներ, որոնց ընթացքում ձեռներեցները ստանում են բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ուղղորդում:

- ՍՀՄ համագործակցում է Վորլդ Վիժն Հայաստանի հետ "Տեղահանված և կոնֆլիկտից տուժած անձանց և տեղացիներնի աշխատանքային հնարավորությունների ընդլայնում և սոցիալ-տնտեսական ինտեգրում" ծրագրի շրջանակներում: Այս ծրագրով ՍՀՄ իրականացնում է Ինֆո Հաբ գործառույթը, կատարում է սիրիահայերի տվյալների բազայի թարմացում և ապահովում է մարքեթինգային ծառայությունների մատուցում Սիրիահայերի արդյունաբերական գոտու շահառուների և իր անդամների համար, ինչպես նաև աջակցում է աշխատատեղերի ստեղծմանը՝ կապ հաստատելով գործատուների հետ և ցանց ստեղծելով աշխատատեղ փնտրողների համար:

- ՍՀՄ կազմակերպում է սիրիահայ կանանց համար ասեղնագործության, խոհարարական և այլ դասընթացներ:

- ՍՀՄ կազմակերպում է B2B հանդիպումներ՝ հարթակ ստեղծելով սիրիահայերի, տեղական և միջազգային բիզնեսների համար:

- ՍՀՄ իրականացնում է լոբբինգ՝ պաշտպանելով սիրիահայ ձեռներեցների շահերը ինչպես պետական մակարդակով, այնպես էլ հանդես գալով որպես գործընկեր՝ ներդրումների ներգրավման գործընթացում:

- ՍՀՄ ունի խմորեղենի արտադրամասի ստեղծման նախաձեռնություն Կլոր սեղան հիմնադրամի հետ համատեղ: Նախաձեռնության իրականացման արդյունքում կստեղծվեն աշխատատեղեր սիրիահայ կանանց համար:

Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/3, Սիրիահայերի արդյունաբերական գոտի

Էլ.փոստ՝ info@sau.am

Հեռ.՝ 095 255355

«ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

- **Հագուստի փաթեթների տրամադրում**
  Փաթեթն իր մեջ ներառում է տաք, ձմեռային բաճկոններ և վերարկուներ: Հագուստի փաթեթների տրամադրումն իրականացվում է ՀԲԸՄ Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

- **Ուսման վարձերի մասնակի փոխհատուցման ծրագիր**
  Սիրիահայ ուսանողների ուսման վարձերի մասնակի փոխհատուցում: Ծրագիրը համատեղ համաֆինանսավորվում է ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի և «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության կողմից, իսկ իրականացվում է ՀԿ-ի կողմից:

- **Առողջապահական աջակցության համակարգում**
  ՀԿ-ն համակարգում է ֆինանսավորման հայթայթման գործընթացները, դիմում է պոտենցիալ ֆինանսավորողների, եթե դիմում ներկայացրած շահառուների մոտ առկա են ծանր և վիրահատական միջամտություն պահանջող հիվանդություններ:

- **«Ինֆո Հաբ» սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում**
  Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության Սիրիայի տարածաշրջանային ֆոնդի (ՄԱԴԱԴ) կողմից, համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական Կարմիր խաչից, Հայկական Կարմիր խաչի ընկերությունից, Հայկական Կարիտասից, ՓՄՁ Համագործակցություն ասոցիացիա ՀԿ-ից և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ից կազմված կոնսորցիումի կողմից:
  Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ աջակցել ՀՀ ինտեգրման պետական քաղաքականության, որը միտված է Հայաստանում սիրիահայերի համար արժանապատիվ կյանքի ապահովմանը լիարժեք պաշտպանության և ինտեգրման միջոցով:
  Ծրագրի շրջանակում կենտրոնը իրականացնում է տեղեկատվության տրամադրման գործառույթ:

- **Սնունդի փաթեթի տրամադրում**
  Փաթեթն իր մեջ ներառում է յոթ տեսակ սնունդ: Փաթեթները տրամադրվում են ԱՄՔՈՐ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Հասցե՝ ք. Երևան, Զաքարյա Քանանաքեռցու 1

Էլ. փոստ՝ ccsaingo@yahoo.com

Հեռ.՝ 011 512251

ՄԱԿ ՓԳՀ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ (UNHCR)

- **Պաշտպանություն, ներառյալ ապաստանի համակարգի հնարավորությունների զարգացում, մուտք երկրի տարածք, որակյալ ապաստանի ընթացակարգեր և բարելավված ընդունելության պայմաններ**
  - Հիմնվելով օրենսդրական բարեփոխման գործընթացների խթանման հաջողված փորձի վրա, ներառյալ Փախստականների և ապաստանի մասին նոր օրենքի մշակման և Սահմանադրության մեջ ապաստանի վերաբերյալ դրույթի ներառման գործում, բարեփոխված օրենսդրության լիարժեք իրագործման խթանում և օժանդակություն:
  - Միգրացիոն պետական ծառայության կարողությունների հետագա զարգացում՝ դասընթացների և տեխնիկական աջակցության միջոցով՝ միևնույն ժամանակ խթանելով իշխանությունների լայն (ֆինանսական) ներգրավվածությունը տեղահանման մարտահրավերներին արձագանքելու գործում:
  - Ռազմավարական դատական ներգրավվածություն՝ դատավորների և իրավաբանների համակարգված վերապատրաստման, իրավաբանական աջակցության ու խորհրդատվության տրամադրման և ռազմավարական դատավարության միջոցով:
  - Սահմանների համակարգված մշտադիտարկում, այցեր քրեակատարողական հիմնարկներ և վերապատրաստման դասընթացներ սահմանապահների և ԱԱԾ այլ աշխատակիցների համար:
  - Տեղահանված անձանց կարգավիճակի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ ուղղված վերջիններիս պաշտպանությանը և ինտեգրման խթանմանը:
  - Մտահոգության առարկա հանդիսացող անձանց ներգրավումը հանրային ծառայությունների և զբաղվածության համակարգերում, ուղղորդման մեխանիզմների ամրապնդում և գործընկերային հարաբերությունների զարգացում:

- **Առաջնային կարիքներ և հիմնական ծառայություններ**
  - Համակողմանի մարդասիրական արձագանքման ցանցերի և ուղղորդման մեխանիզմների պահպանում և ընդլայնում:
  - Առավել խոցելի մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար դրամական աջակցության տրամադրում, ներառյալ բնակվարձի մասնակի փոխհատուցում և բազմաֆունկցիոնալ դրամաշնորհներ (օրինակ՝ ձմեռացման աջակցության, միանվագ դրամական աջակցություն նոր ժամանողների համար, դպրոց հաճախելու աջակցություն, «կանխիկ գումար՝ աշխատանքի դիմաց»):
  - Առավել խոցելի մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար լրացուցիչ առողջապահական ծառայությունների մատուցում, անհատական խնամք տարեց և անկողնային հիվանդ փախստականների համար:
  - Ժամանակավոր սոցիալական կացարաններ մտահոգության առարկա հանդիսացող անձանց համար՝Կառավարության և ՀԿ գործընկերների կողմից տրամադրվող և ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից վերանորոգված/ կահավորված:
  - Սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում, սեռով և գենդերով պայմանավորված բռնության կանխարգելում և արձագանք:

- **Երկարաժամկետ լուծումների խթանում՝ ինտեգրման և ինքնաբավության խթանման միջոցով**

- Հայերեն և ռուսերեն լեզուների դասընթացների կազմակերպում, միջոցառումներ՝ ուղղված մշակութային և սոցիալական ադապտացիային, «ինչպես Հայաստանում զբաղվել գործարարությամբ» խորագրով դասընթացներ, ինչպես նաև մասնագիտական դասընթացներ տեղահանված սկսնակ գործարարների և ձեռնարկատերերի համար՝ զուգորդված ուսուցողական ծրագրերի և շուկա մուտք գործելու աջակցության հետ:
- Կենսապահովման ծրագրեր՝ փոքր դրամաշնորհների և միկրովարկերի տրամադրման միջոցով, ինչպես նաև «կանխիկ գումար՝ աշխատանքի դիմաց» միջամտությունների իրականացում:
- «Ընտանիքի ընկեր», «Միացիր համայնքին» և «Երկուսով աշխատանքի համար» ծրագրեր, համայնքի հավաքագրում, երիտասարդների ինտեգրման հատուկ միջոցառումներ:

- **Ապաքաղաքացիության կանխարգելում և կրճատում**
  Քաղաքացիության մասին օրենսդրության փոփոխությունների խթանում և ապաքաղաքացիության որոշման գործընթացների կիրառում:

Հասցե՝ ք. Երևան, 0010, Պետրոս Ադամյան փ. 14

Էլ.փոստ՝ armye@unhcr.org

Հեռ.՝ + 374 10 584 892

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- Համակարգում է ՀՀ պետական մարմինների, միջազգային, հասարակական, բարեգործական, սփյուռքյան կազմակերպությունների ջանքերը՝ ուղղված Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն հայցող անձանց հրատապ օգնությանը, աջակցությանը և ինտեգրման (այդ թվում՝ զարգացմանը միտված) խնդիրների լուծմանը:

- **Նախարարության պաշտոնական կայքէջ /www.mindiaspora.am/**
  «Սիրիահայերի համար» անկյուն էջում զետեղված է Սփյուռքի նախարարության և իր գործընկեր կազմակերպությունների կողմից սիրիահայերի համար իրականացվող աջակցության և ինտեգրման ծրագրերի, ինչպես նաև սիրիահայերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ:

- Խորհրդի, հարցերի, բողոքների, առաջարկությունների, խորհրդատվության կամ աջակցության կարիք ունենալու դեպքում կարող եք դիմել ՀՀ սփյուռքի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների վարչություն

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3

Էլ.փոստ՝ middleeast@mindiaspora.am

Հեռ.՝ 010 58 56 01

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

- **Հումանիտար աջակցություն.**
  - Ապաստան հայցողների ընդունում,
  - Ապաստան հայցողի վկայականի տրամադրում,
  - Փախստականի կարգավիճակի որոշում:

- **Սոցիալ-տնտեսական և մշակութային ինտեգրում**
  - ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց կարիքների գնահատում և ինտեգրման պլանի մշակում,
  - Գնահատված կարիքներին համապատասխան փախստականների ուղղորդում՝
    - Հայոց լեզվի դասընթացներ իրականացնող կազմակերպություն,
    - Քաղաքացիական դասընթացներ իրականացնող կազմակերպություն,
    - Այլ (կրթական, բժշկական, զբաղվածության, սոցիալական, իրավաբանական) օժանդակություն ցուցաբերող մարմիններ/կազմակերպություններ,
  - Ժամանակավոր կացարանի տրամադրում:

Հասցե՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու փ. 31

Էլ.փոստ՝ migrationservice.sms@mta.gov.am

Հեռ.՝ 060 27 50 03

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ /REPAT ARMENIA/

Հիմնադրամը տրամադրում է՝

- Ինտեգրման խորհրդատվություն
  - Լոգիստիկա
  - Իրավական կարգավիճակ
  - Նախկան հայրենադարձության աջակցություն
  - Տեղական խորհուրդներ

- Նեթվորքինք հանդիպումներ
  - Թեմատիկ (Mix & Mingle)
  - Թեմատիկ (Meet & Greet)

- Թեմատիկ (Happy hour)
- Արտագնա իրադարձություններ
- Ֆորումներ (“Imagine Armenia” ֆորումներ սփյուռքյան խոշոր համայնքներում, տեղական ֆորումներ)

- Զարգացման աջակցություն
  - Siramark ուղեցույց
  - Մեդիայի հետ կապեր
  - Տարածում սոցիալական ցանցի միջոցով
- Աշխատանքի խորհրդատվություն
  - Աշխատանքային շուկայի կողմնորոշում
  - Ինքնակենսագրության / մոտիվացիոն նամակի վերանայում

- Բիզնեսի աջակցություն
  - Ներկայացում ֆինանսական և իրավաբանական խորհրդատուներին
  - Repat Start Up ծրագիր
  - Բիզնեսի զարգացում

Հասցե՝ ք. Երևան, Մելիք Ադամյան 2/2

Էլ. փոստ՝ contact@repatarmenia.org

Հեռ.՝ 091 46 46 60

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

- **ՍՔԱՅ երիտասարդական ակումբ**

  Ծրագիրը իրականացվում է <<Երիտասարդները հանուն Զարգցման>> հիմնդրամի և Վորլդ Վիժն Հայաստանի համագործակցությամբ:
  Ծրագրի նպատակն է զարգացնել և նպաստել սիրիհայ և տեղացի երիտասարդերի կարողությունները: Հնարավություն տալ երիտասարդներին ծանոթանալու և ինտեգրվելու հասարակական կյանքին, ինչպես նաև իրականացնել ոլորտային միջոցառումներ և իրակացնել սոցիլական ձեռներեցություն:

  Ծրագրի տևողությունը մեկ տարի է, որի ընթացքում երիտասարդները զարգացնում են իրենց կարողությունները հետևյալ 4 ուղղություններով՝ Առաջնորդություն, Ակտիվ քաղաքացիություն, Աշխատունակություն և Սոցիալ Ձեռներեցություն:

  ՍՔԱՅ ակումբը նախատեսված է 16-25 տարեկան տեղացի և սիրիահայ երիտասարդների համար:

  Դիմելու կարգը՝

Եթե ցանկանում ես լինել այն հաջողակը, ով հնարավորություն կունենա միանալու այս ծրագրին, ապա ուղարկիր քո CV-ն մինչև դեկտեմբերի 29-ը հետևյալ էլ. փոստի հասցեին՝ foundationyfd@gmail.com :

Հասցե՝ ք.Երևան, Ռոմանոս Մելքիյան 1

Էլ.Փոստ՝ foundationyfd@gmail.com

Հեռ.՝ +374 55 600712, +374 94 802502

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԲԱԺԻՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

- **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին ծրագիր**
  - ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,
  - ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,շ
  - աշխատանքի վայրում անմրցունակ անձի կողմից որոշակի աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար գործատուին տրվում է միանվագ փոխհատուցում՝ 50-200 հազ. դրամի չափով: Միանվագ փոխհատուցման չափը տարբերակվում է ելնելով աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշներից,
  - ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվածների առնվազն 10%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք,
  - ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 80
- **Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում**
  - ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,
  - ծրագրի շահառուները գործազուրկներն են,
  - ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից գործազուրկին վճարվում է

աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափով, իսկ գործատուին տրամադրվում է գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը և օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը փոխհատուցելու համար,

- ծրագրի տևողությունը 3 ամիս է,
- ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվածների առնվազն 20%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք
- ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 32%:

- **Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում**
  - ծրագրի նպատակն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,
  - ծրագրի շահառուները գործազուրկներն են, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձինք,
  - մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված աշխատանք փնտրող անձին ուսուցման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ
  - ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 10%-ը պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք,
  - ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 25%:
- **Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում**
  - ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով, մի կողմից՝ աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղի արդյունավետ համալրման ապահովումը,
  - ծրագրի շահառուներն են աշխատանք փնտրողները և գործատուները,
  - ծրագիրը մեկօրյա միջոցառում է, որն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով:
  - ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 20%.
- **Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում**
  - Ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես, գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է,
  - ծրագրի շահառուներն են գործազուրկները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք,

- ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցվում են հետևյալ ծախսերը՝

- շահառուի և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսը,

- շահառուի և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսը,

- մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսը,

- միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով,

- ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով,

- աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ից մինչև կրկնապատիկի չափով, որը հաստատված է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի N 82-Ա/1 հրամանով,

- ծրագրի տևողությունը 2 տարի է:

Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում ծրագրով 2018թ.-ին նոր ծրագիր չի նախատեսվում իրականացնել, սակայն 2016թ-ին սկսած և ծրագիրը շարունակող 22 շահառուի ֆինանսավորումն 2018թ. ապահովելու համար ամենամյա ծրագրում նախատեսվում է 11,220.0 հազ. դրամ անցողիկ գումար: Ծրագրի իրականացման կարգի համաձայն անցումային գումարները ձևավորվում են յուրաքանչյուր ամիս վճարվող կոմունալ ծախսերի (նվազագույն աշխատավարձի չափով՝ առավելագույնը 2 տարի) և մշտական բնակության վայր այցելելու համար:

- **Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում**
  - ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի աշխատանքային ունակությունների ու կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է,
  - ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են,
  - ծրագրի տևողությունը չի կարող գերազանցել վեց ամիսը,
  - ծրագրում ընդգրկված անձանց՝ ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով՝ մասնագիտական ուսուցմանը մասնակցելու համար պահանջվող տրանսպորտային և այլ ծախսերը հոգալու, ինչպես նաև երեխաների խնամքը կազմակերպելու համար.
  - ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 32%:
- **Երեխա ունեցող մինչև 24 տարեկան գործազուրկ կանանց բարձրագույն մասնագիտական կրթությանը նախապատրաստման աջակցության տրամադրում**

- ծրագրի նպատակն առաջին երեխայի ծննդյան ժամանակ մոր միջին տարիքի աստիճանական նվազումն է, պարզ վերարտադրության խրախուսման միջոցով ընդլայնված վերարտադրության համար հիմքերի նախապատրաստումը և երեխաներ ունեցող՝ մինչև 24 տարեկան գործազուրկ կանանց աշխատաշուկայում մրցունակության բարձրացումն ու նրանց կայուն զբաղվածության ապահովումը
- ծրագրի շահառուներն են մինչև 24 տարեկան (ներառյալ) գործազուրկ այն կանայք, որոնք ունեն առնվազն երկու երեխա, միջնակարգ կամ միջնակարգ մասնագիտական կրթություն և չեն սովորել բարձրագույն ուսումնական հաստատությունում,
- նախապատրաստական դասընթացներում ընդգրկված անձանց ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով,
- կանխատեսվում է, որ ծրագրի շահառուների մոտ 70%-ը ծրագրի իրականացման արդյունքում կընդունվի բարձրագույն ուսումնական հաստատություն.

- **Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում**
  - ծրագրի նպատակը մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու և նրանց՝ աշխատաշուկա վերադառնալու հնարավորությունների մեծացման միջոցով, կայուն զբաղվածության ապահովումն է,
  - ծրագրի շահառուներն են տարածքային կենտրոններում հաշվառված, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձինք, որոնք մինչև երեխայի երկու տարին լրանալը վերադառնում են աշխատանքի և ում ամսական միջին աշխատավարձը չի գերազանցում նվազագույն ամսական աշխատավարձի կրկնապատիկը,
  - ծրագրի տևողությունը երկու տարի է,
  - ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական ցուցանիշը կկազմի 90%.
- **Գործակալությունը զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում տրամադրում է նաև հետևյալ հիմնական ծառայությունները՝**
  - աշխատանք փնտրող անձին անհրաժեշտ տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում և հաշվառում, կայուն զբաղվածության ապահովման նպատակով կարիքների գնահատում և անհատական ծրագրի կազմում,
  - գործատուներին անհրաժեշտ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում,շ
  - գործատուներից թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացում և հավաքագրում,
  - աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
  - աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն,
  - աշխատանք փնտրող անձանց, թափուր աշխատատեղերի, գործակալության հետ համագործակցող գործատուների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի վարում,

- աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին անհրաժեշտ տեղեկատվության և մասնագիտական խորհրդատվության, ինչպես նաև մեթոդական աջակցության տրամադրում,
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, հատկապես՝ նպաստառու ընտանիքների գործունակ և աշխատանքային տարիքի հասած, գործազուրկ անդամների հետևողական ներգրավումը կայուն կամ ժամանակավոր զբաղվածություն ապահովող ծրագրերում,
- զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի և ծառայությունների հանրային իրազեկում:

Հասցե՝ ք. Երևան, Կարապետ Ուլնեցու փող., 68 շենք, 5-րդ հարկ

Էլ. Փոստ.՝ info@employment.am

Հեռ.՝ 010 29 81 02, 095 20 10 20

ՓՄՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

- **«Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում»**
  Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության Սիրիայի տարածաշրջանային ֆոնդի (ՄԱԴԱԴ) կողմից, համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման գործակալության կողմից:
  Ծրագիրն իրականացվում է Ավստրիական Կարմիր խաչից, Հայկական Կարմիր խաչի ընկերությունից, Հայկական Կարիտասից, ՓՄՁ Համագործակցություն ասոցիացիա ՀԿ-ից և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ից կազմված կոնսորցիումի կողմից:

  Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ աջակցել ՀՀ ինտեգրման պետական քաղաքականությանը, որը միտված է Հայաստանում սիրիահայերի համար արժանապատիվ կյանքի ապահովմանը լիարժեք պաշտպանության և ինտեգրման միջոցով:

  Ծրագրի խնդիրն է՝ բարելավել սիրիահայերի և հյուրընկալ բնակչության սոցիալ-տնտեսական կայունությունն ու ամրապնդել Հայաստանում տնտեսական աճի ինստիտուցիոնալ կարողությունները:

  Ծրագրի տնտեսական ինտեգրման բաղադրիչի շրջանակում ՓՄՁ համագործակցություն ասոցիացիա ՀԿ-ն Հայկական Կարիտաս բարեսիրական կազմակերպության հետ համագործակցությամբ, Երևանում հիմնելու են ՓՄՁ բիզնես ինկուբատոր: Նպատակն է՝ մի կողմից նպաստել Հայաստանում բիզնես միջավայրի, բիզնես մշակույթի բարելավմանը, մյուս կողմից՝ դասընթացների, ուղղորդման, ֆինանսավորման և ինկուբացիայի միջոցով նպաստել սիրահայերի և տեղացիների գործարար գաղափարների իրականացմանը, ձեռնարկությունների զարգացմանը:

Հասցե՝ ք. Երևան, Նաիրի Զարյան 22

Էլ. Փոստ՝ info@sme.am

Հեռ.՝ 094 27 55 27

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

Կայուն լուծումներ տեղահանված եւ կոնֆլիկտից տուժած անձանց ինտեգրման համար

- **Տեղահանված եւ կոնֆլիկտից տուժած անձանց եւ տեղացիներնի աշխատանքային հնարավորությունների ընդլայնում եւ սոցիալ-տնտեսական ինտեգրում**

  Ծրագիրը առաջարկում է անհրաժեշտ հմտություններ, տեխնիկական դասընթացներ, փորձնակություն եւ մասնագիտական կրթություն, ինչպես նաև աշխատանք փնտրողներին կապում է աշխատանքի տեղավորման գործակալությունների, Զբաղվածության պետական գործակալության, մասնավոր ձեռնարկությունների եւ խոշոր գործատուների հետ:

- **Կայուն աջակցություն սկսնակ ձեռներեցներին (ստարտափեր) եւ փոքր ու միջին ձեռնարկություններին**

  Մրցութային կարգով ընտրված սկսնակ ձեռներեցներ եւ փոքր ու միջին ձեռնարկությունները ծանոթանում եմ նորարարությանն ու ձեռներեցությանը վերաբերող թեմաներին՝ դասընթացների, վարպետաց դասերի, շուկայավարման եւ ապրանքանշման ռազմավարությունների մշակման, արտահանման եւ առաջխաղացման գործում ուղղորդման միջոցով: Լավագույն բիզնես ծրագիր ներկայացրած մասնակիցներին կտրամադրվի ֆինանսական աջակցություն իրենց բիզնես ծրագրի իրականացման համար:

Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Պետքարտուղարության Բնակչության, փախստականների եւ միգրացիայի գրասենյակի կողմից:

Հասցե՝ ՀՀ, Երևան 0065, Ռոմանոս Մելիքյան 1

Էլ փոստ՝ wvarmenia@wvi.org

Հեռ՝ (374 10) 749 118, 749 119

World Vision ՀԱՅԱՍՏԱՆ